# ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

## ԱՇԽԱՐՀԲԵԿ ՔԱԼԱՆԹԱՐ

(Մենդյան 100-ամյակի առթիվ)

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

*Բոլորել է անվանի հայագետ, հնագետ, պատմաբան, պրոֆեսոր Աշխարհբեկ Քալանթարի ծննդյան հարյուրամյակը։*

*Աշխարհբեկ Քալանթարը ծնվել է Գուգարքի Արդվի գյուղում 1884 թ. փետրվարի 11-ին. 1903 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը։ 1905—1906 թթ. աշխատել է որպես ուսուցիչ Ախալցխայի դպրոցներից մեկում։ Ներսիսյան դպրոցում ստացած հիմնավոր միջնակարգ կրթությունը դասական գիտելիքներով լրացնելու նպատակով նա 1906 թ. էքստեռն կարգով ավարտում է նաև Թիֆլիսի 3-րդ արական գիմնազիան։ 1907 թ. Աշխարհբեկ Քալանթարն ընդունվում է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի հայ-վրացական բանասիրության և պատմության բաժինը՝ աշակերտելով մեծանուն լեզվաբան, կովկասագետ, արևելագետ Նիկողայոս Մառին։ Հաջողությամբ ավարտելով համալսարանը 1911 թ., Ա. Քալանթարը մնում է նույն ֆակուլտետի հայագիտության և վրացագիտության ամբիոնում՝ իր գիտելիքները կատարելագործելու նպատակով։*

*Դեռևս ուսանելու տարիներին և հետագայում Ա. Քալանթարը մասնակցում է Անիի պեղումներին, որոնք կատարվում էին Ն. Մառի ղեկավարությամբ և Հովսեփ Օրբելու անմիջական մասնակցությամբ։ Պետերբուրգի համալսարանում, մանավանդ Անիի երկարամյա պեղումների ընթացքում ձևավորվում է երիտասարդ գիտնականը՝ հայագիտական, հնագիտական և արևելագիտական լայն գիտելիքներով և աշխատանքի զգալի փորձով։*

*1917 թ. Աշխարհբեկ Քալանթարը Անիից հեռացող վերջին հնագետներից մեկը եղավ և զգալի աշխատանք կատարեց Անիի պեղումներով հայտնաբերված և տեղի թանգարանում կենտրոնացված հնագիտական նյութերը տեղափոխելու, փրկելու գործում[1]։ Նույն 1917 թ. Ա. Քալանթարը Նիկողայոս Ագոնցի հետ գործուղվում է Վան՝ քաղաքում և նրա շրջակայքում ուրարտական սեպագիր արձանագրություններ ուսումնասիրելու և նորերը հայտնաբերելու առաքելությամբ և փրկում բերում է որոշ նյութեր։ 1920 թ. մի պահ հնարավոր դարձավ ուսումնասիրություններ ձեռնարկել Անիի շրջանում և Ա. Քալանթարի ղեկավարած գիտական արշավախումբը հուշարձանների չափագրություններ, լուսանկարումներ է կատարում Անիում, Տեկորում և ընդօրինակում է բազմաթիվ վիմագիր արձանագրություններ։*

*1921 թ. Աշխարհբեկ Քալանթարը հրավիրվում է Երևանի պետական համալսարան, որտեղ աշխատում է մինչև 1937 թ.՝ դասախոսելով հնագիտություն, հայոց պատմություն (հին դարաշրջանը) և Հին Արևելքի պատմություն. Նա զգալի վաստակ ունի համալսարանական, գիտական կադրերի, մասնավորապես հնագետ-պատմաբանների պատրաստման բնագավառում։ 1929 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում։*

---

[1] *Այժմ այդ նյութերը գտնվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում։*

Մեծ է անվանի գիտնականի վաստակը հայ ժողովրդի՝ դարերի ընթացքում կերտած պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և ուսումնասիրության գործում։

Հնությունների պահպանության կոմիտեի հիմնադրման օրից՝ 1923 թ. սկսած նա անընդմեջ եղել է նրա աշխատակիցը, տարիներ շարունակ գիտական քարտուղարը, անդամը։ Կոմիտեի նախագահ, ճարտարապետության ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի, մեծավաստակ ճարտարապետ Թորոս Թորամանյանի, Սենեքերիմ Տեր-Հակոբյանի, հետագայում՝ Կարո Ղաֆադարյանի, Սեդրակ Բարխուդարյանի, Հովսեփ Եղիազարյանի և այլոց հետ միասին նա մեծ ջանքեր է գործադրել հուշարձանների պահպանության և ուսումնասիրության ասպարեզում։

1920-ական թթ. Հնությունների պահպանության կոմիտեի առջև ծառացած գլխավոր խնդիրը հուշարձանների հաշվառումը և նրանց պահպանության կազմակերպումն էր, և Ա. Քալանթարն այդ գործին նվիրվում է ամբողջ եռանդով ու մեծ ջանասիրությամբ։ Նա գլխավորում է բազմաթիվ արշավախմբեր՝ հուշարձանների հետախուզումը և հաշվառումը ուղեկցելով նրանց գիտական ուսումնասիրությամբ։

1920—30-ական թթ. Հայաստանում գոյություն են ունեցել տարբեր անուններ կրող գիտական հաստատություններ՝ «Հայաստանի գիտական ինստիտուտ» (1921 թ.), «ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտ» (1925 թ.), «Կուլտուրայի և պատմության ինստիտուտ» (1932 թ.), «Պատմության և գրականության ինստիտուտ» (1935 թ.)։ Անունների փոփոխությունը, սակայն, նրանց կազմի փոփոխություն չէր առաջացնում։ Այդ ինստիտուտները փաստորեն միավորում էին հայագիտության հին սերնդի փայլուն համաստեղության համարյա բոլոր ներկայացուցիչներին, նաև մի շարք երիտասարդ մասնագետների։ Աշխարհբեկ Քալանթարը այդ հաստատությունների մշտական անդամն էր և նրանց գիտահետազոտական աշխատանքների գործուն մասնակիցը։

Բազմակողմանի և բազմաբովանդակ է եղել Աշխարհբեկ Քալանթարի գիտական, մանկավարժական և գիտակազմակերպական գործունեությունը։ Առհատնում նրա եռանդը։ Նույնքան բազմակողմանի է եղել նաև նրա գիտական ստեղծագործությունը, որն ընդգրկել է տարբեր դարաշրջանների վերաբերող պատմահնագիտական բազմաթիվ հարցեր՝ հին քարեդարից (պալեոլիթից) սկսած մինչև միջին դարերը ներառյալ, չբացառելով նաև հայկական ճարտարապետության, արվեստի հուշարձանների, վիմագիր արձանագրությունների ուսումնասիրությունը։ Նրա գրչին են պատկանում 30-ից ավելի աշխատություններ։ Դեռևս 1913 թ. նա հրատարակել է դեպի Իմերդեկ կատարած ուղևորության հաշվետվությունը, որը վերաբերում էր տեղի՝ Աստվածածնի տունը կրող եկեղեցու և նրա վիմագիր արձանագրությունների հետազոտությանը։ 1923 թ. լույս է տեսել Երևանի համալսարանում իր կարդացած դասախոսությունների համառոտագրությունը՝ «Հնագիտություն, մասն Ա. նախապատմական հնագիտություն», որը, մասնագիտական գրականության բացակայության պայմաններում, անհրաժեշտ ձեռնարկ էր ուսանողության համար։ Արագածի լանջերին կատարած հետազոտությունների հաշվետվությունը, Արագածի պատմահնագիտական տեսարկով, հրատարակվել է «Նորք» ամսագրում[2]։

1927—1929 թթ. Աշխարհբեկ Քալանթարը Սովետական Միության և արտասահմանյան ամսագրերում և գիտական ժողովածուներում հրատարակել է հոդվածներ Երևանում՝ Նրգէսի շինարարության ժամանակ գտնված բրածո մարդու և Արմավիրում հայտնաբերված մի հիերոգլիֆ արձանագրության մասին։

Աշխարհբեկ Քալանթարի հետաքրքրության շրջանակներում էին նաև ուրարտական սեպագիր արձանագրությունները։ 1927 թ. լույս է տեսնում նրա

---

2 Քարե դարը Հայաստանում.—«Նորք», 1925, № 5—6։

«Երկու սեպագիր» խորագիրը կրող գրքույկը, որում հրապարակված է Ռուսա I-ի՝ Նոր Բայազետում գտնված արձանագրությունը, նկարագրված են Օձաբերդի (Ծովինարի)՝ Սևանի ջրերի վրա կախված անմատչելի ժայռի վրա փորագրված արձանագրության էստամպաժ հանելը և լրացուցիչ ուսումնասիրությունները, շարադրված է դեպի հյուսիս ուրարտացիների կատարած արշավանքների համառոտ պատմությունը[3]։ Նրա ուսումնասիրության առարկան է դառնում նաև Հոկտեմբերյանի շրջանի Ջանֆիդա գյուղում գտնված ուրարտական արձանագրությունը[4]։

Լինելով Հայաստանի հնություններիպահպանության կոմիտեի գիտական քարտուղարը, Ա. Քալանթարը մի հոդվածով ամփոփում է կոմիտեի 1920-ական թթ. գործունեությունը[5]։

1931 թ. ծրագրված էր պեղումներ ձեռնարկել Հին Վաղարշապատում։ Նախատեսված էր արշավախմբի կազմը՝ բաղկացած մի քանի անվանի գիտնականներից և երիտասարդ հնագետներից։ Արշավախմբի ղեկավար լինելու էր ակադ. Նիկողայոս Մառը, սակայն ծանրաբեռնված լինելով անհետաձգելի աշխատանքներով, նա հնարավորություն չունեցավ մասնակցելու պեղումներին, ուստի արշավախմբի փաստական ղեկավարությունն իրականացնում էր Ա. Քալանթարը։ Պեղումներ կատարվեցին Զվարթնոց տաճարի մերձակայքում և Հռիփսիմե եկեղեցու շուրջը։ Արշավախումբը հայտնաբերեց տարբեր դարաշրջանների հուշարձաններ, սկսած ուշ բրոնզեդարյան և վաղ երկաթի ժամանակների դամբարանաբլուրներից մինչև Զվարթնոցի վաղ միջնադարյան քաղաքատիպ բնակավայրը իր պարիսպներով։ Հռիփսիմե եկեղեցու շուրջը բացվեց Վաղարշապատի հին գերեզմանոցը, որտեղ հայտնաբերված թաղումները նա բաժանեց հինգ տիպի՝ քարարկղային դամբարաններ, հողի կըտրըվածքում (հիմնահողային), կարասային, թրծած կավե դադաղ-սարկոֆագային և կոշկաձև սարկոֆագային դամբարաններ։ Այդ դամբարաններում հայտնաբերվեցին անտիկ դարաշրջանի համար բնորոշ հնագիտական նյութեր։ Դա հին հայկական կամ անտիկ դարաշրջանի հուշարձանների Հայաստանում կատարվող առաջին պեղումներն էին, որոնք թեև չշարունակվեցին, բայց բավականաչափ արդյունավետ եղան։

Կատարված պեղումների արդյունքներին է նվիրված Ա. Քալանթարի «Հին Վաղարշապատի պեղումները» աշխատությունը, որը լույս է տեսել 1935 թ.։ Գրքույկում տրված է պեղումների ընդհանուր նկարագրությունը և հայտնաբերված նյութերի ճիշտ թվագրությունն ու մեկնաբանությունը։ Կարելի է ասել, որ Վաղարշապատի պեղումներով և Աշխարհբեկ Քալանթարի ոչ մեծածավալ, բայց առժեքավոր գրքով սկսվեց հին կամ անտիկ դարաշրջանի հայկական նյութական մշակույթի հնագիտական ուսումնասիրությունը։

Արագածի լանջերին տարիների ընթացքում կատարած հետազոտական աշխատանքների արդյունքը հանդիսացավ նրա «Արագածը պատմության

---

3 Աշխարհբեկ Քալանթար. Երկու սեպագիր. Երևան, 1927։

4 Տե՛ս օրագիր Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի. № 4, պրակ Ա. 1930։

5 Տե՛ս Գիտությունը և գիտահետազոտական աշխատանքները Խորհրդային Հայաստանում 1920—1930 թթ. (ժողովածու). Երևան, 1931։

մեջ» գրքույկը, որը պատմահնագիտական ուղեցույց է և իր նշանակությունը չի կորցրել նաև մեր օրերում։ Նույն բնույթի ուսումնասիրություն է նաև «Մի հնագույն ջրաբաշխական սիստեմ Խորհրդային Հայաստանում» հոդվածը[6]։

Աշխարհբեկ Քալանթարը հրատարակության էր պատրաստել նաև տասից ավելի այլ աշխատություններ, որոնց թվում՝ «Հայաստանի մեգալիթյան կուլտուրան և նորահայտ հիերոգլիֆները», «Հայաստանն իր պատմության արխաիկ շրջանում», «Հայաստանը խալդական արշավանքներից առաջ»։

Գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում պահվում են Ա. Քալանթարի՝ կորստից փրկված հետևյալ երեք ձեռագիր աշխատությունները.

ա) Հայ վիմական արձանագրություններ. Վանստան (Իմերզեկ), 265 թերթ։

բ) Արագածյան ջրաբաշխական սիստեմը հին Հայաստանում, 21 էջ, 1933 թ.։

գ) Երևանի կաթողիկեն, 34 էջ, 1937 թ.։

Հեղինակն ունեցել է և այլ ձեռագիր աշխատություններ։

Անվանի գիտնականի գործունեությունն ընդհատվեց 1937 թ., ուժերի ծաղկման շրջանում, իսկ իր մահկանացուն նա կնքել է 1942 թ. հունիսի 2-ին, թողնելով իր հայրենիքին նվիրված գիտնականի բարի հիշատակ։

Աշխարհբեկ Քալանթարը զգալի ներդրում ունի գիտության բնագավառում, և նրա թողած գիտական ժառանգության մի մասը չի կորցրել իր արժեքն ու նշանակությունը. մեկ ժողովածուով դրանց հրատարակությունը կլիներ նվեր հայագիտությանը և հավերժացումը վաստակավոր գիտնականի հիշատակի։

## АШХАРБЕК КАЛАНТАР

**(К 100-летию со дня рождения)**

*Академик АН АрмССР Б. Н. АРАКЕЛЯН*

**Резюме**

Видный арменовед, археолог, историк проф. Ашхарбек Калантар родился в феврале 1884 г. В 1903 г. окончил школу Нерсисян в Тбилиси, в 1905—1906 гг. работал школьным учителем в Ахалкалаке. В 1907 г. А. Калантар поступает в Петербургский университет и учится на отделении армяно-грузинской филологии факультета восточных языков, будучи студентом Н. Я. Марра. Еще до окончания университета в 1911 г. и впоследствии он в течение ряда лет принимает участие в раскопках средневековой столицы Армении Ани, которые проводились под руководством Н. Я. Марра.

В 1921 г. А. Калантар приглашается на работу в Ереванский государственный университет, где он преподавал, археологию и историю Древнего Востока вплоть до 1937 г. Он имеет большие заслуги в подготовке кадров для молодой Советской республики. Исключительно большую работу он проводил по учету и охране памятников страны, будучи сотрудником и ученым секретарем основанного в 1923 г. Комитета по охране древностей Армении. В 1931 г. Калантар возглавлял экспедицию по раскопкам древнего Вагаршапата, положив начало изучению археологических памятников Армении эпохи античности.

А. Калантар—автор более 30 научных трудов. Его исследования охватили довольно широкий круг вопросов истории и археологии, начиная от палеолита и до средних веков включительно. Им внесен значительный вклад в археологическое изучение Армении и в подготовку кадров по археологии и истории. Скончался Калантар в июне 1942 г.

---

6 Տե՛ս ՀՍԽՀ պատմության և գրականության ինստիտուտի Տեղեկագիր. գիրք 2-րդ, 1937։